

Հ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Թե ի՞նչ հերթականությամբ է մարդը ճանաչել իրեն շրջապատող աշխարհն ու անվանումներ տվել այն կազմող նյութերին, հայտնի չէ: Բայց դա կատարվել է այնքան վաղ, որ այդ մասին կարելի է գաղափար կազմել միայն հետադարձ դատողություններով: Փաստ է, սակայն, որ այդ գործընթացը տեղի է ունեցել հազարամյակների ընթացքում, որովհետև մարդուն դրա համար պետք էր բավական փորձառություն: Մարդն ի սկզբանե չի ունեցել որոշակի կողմնորոշիչներ՝ սեփական զգայարաններից զատ, հետևաբար, նյութերի ճանաչումն ու դրանց ճանաչման շահանքիչների բացահայտումը տեղի են ունեցել միաժամանակ, որպես ճանաչման կամ մարդու քաղաքակրթման միասնական գործընթացի անքակտելի բաղադրամասեր:

Հին աշխարհին հայտնի մետաղների անվանումների վերջին շրջանի ստուգաբանական ուսումնասիրությունները¹ թույլ են տալիս ենթադրել, որ չի բացառվում անցյալում քաղաքակրթման առանձին օջախների գոյությունը՝ մեկ ընդհանուր նախալեզվով, որից հետագայում սերել են միևնույն նշանակություն տարբեր անվանումներ և հաստատվել տարբեր լեզուներում: Հասկանալի է, որ դա չի փոխում հարցի դրվածքը, այլ պարզապես այն սահմանափակում է որոշակի աշխարհագրական շրջանի տարածքում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վաղ անցյալում նյութերի անվանումները: առաջացման համար հիմք է ծառայել նրանց արտաքին (տեսանելի, շոշափելի) հատկությունների (գույն, ձև, շահի, ծանրություն, փայլ և այլն) աստիճանական տարբերակումը: Եվ դա բնական է, որովհետև իր առաջին պարզունակ քայլերն անող բանական էակը նախ պիտի ճանաչեր նյութերի հատկությունները:

Աշխարհին հայտնի ամենահին քիմիական անվանակարգությունը (նոմենկլատուրան) շումերական ծագում և ավելի քան 4000 տարվա վաղեմություն ունի²: Այն լիարժեք պատկերացում է տալիս առանձին նյութերի դասակարգման, նրանց անվանումների առաջացման և անվանակարգության սկզբունքների ձևավորման մասին: Նրանից տեղեկանում ենք, որ սկզբնական շրջանում նյութերը նախ դասակարգվել են մեծ խմբերով՝ իրենց արտաքին բնորոշ հատկությունների հիման վրա, այնուհետև խմբերի ներսում առանձնացվել են ենթախմբեր՝ հատկությունների ավելի նուրբ տարբերությունների հիմքի վրա: Այսպես, օրինակ, քարերի դասը ներառել է բոլոր ամուր հողային գոյացությունները, որոնք իրենց հերթին ստորաբաժանվել են սպիտակ, թեթև,

¹ Վ. Վ. Իվանով, «Պատմաբանասիրական հանդես», 1976, № 4, էջ 69—85:

² R Campbell Thomson, Dictionary of Assirian Chemistry and Geology, Oxford, 1936.

ծանր, շատ ծանր, թշուառ (Թթվի ազդեցութեամբ) և այլ քարատեսակների: Նյութերի անվանումների առաջացման վերաբերյալ ուշագրավ է Մառի տեսակետը, համաձայն որի դրանք ծագում են հասարակութեան կողմից նյութերի ճանաչվելուց և կիրառութիւն ստանալուց հետո³: Հետևաբար, այդ սկզբունքով առաջնորդվելով, մենք այսօր սխալված չենք լինի, եթե նյութերի անվանումների մեջ փորձենք փնտրել տարբեր «անվանադիր ժողովուրդների» վաղ շրջանի հասարակական պատկերացումները դրանց վերաբերյալ:

Մարդու առաջին ճանաչած նյութերից են քարը, հողը, կավը, աղը, կիրը, ծծումբը, կուպրը, ածուխը, գիպսը, բորակը, արջասպը, պողպատը, այնուհետև մետաղները և այլն: Այս նյութերից շատերի անունները մեզանում միանշանակ կիրառութիւն են ունեցել ի սկզբանե, որից կարելի է հետևեցնել, որ դրանք վաղուց են ամրապնդվել հայերեն կամ նախահայերեն բանավոր խոսքի մեջ, այսինքն՝ առաջացել են հայերենի ձևավորման տարածաշրջանում:

Մարդկային քաղաքակրթության պատմութիւնն սկսվում է քարի դարով: Քարի հետ մարդու շփումն ունի ավելի քան 2,5 մլն տարվա պատմութիւն: Բանական մարդը ձևավորվել է քարի հարևանութեամբ՝ քարայրում, ուր նա բնակվել է: Մարդու առաջին աշխատանքային գործիքը նույնպես եղել է քարը, որն իր կարծրութեան շնորհիվ այլընտրանք չի ունեցել: Հետազոտութիւնները ցույց են տալիս, որ քարի առաջին պարզունակ ընտրութեան համար հիմք է ծառայել նրա ձևը⁴: Որպես գործիք օգտագործելու համար սկզբում ընտրվել են այն քարերը, որոնք հարմար են եղել ձեռքով բռնելու համար: Ավելի ուշ ծագել է ամուր քարը ձեռքին հարմարեցնելու խնդիրը, որն իր հետևից բերել է քարը մշակելու, նրան «նշի ձև» տալու անհրաժեշտութիւնը: Դրանով սկիզբ է դրվել քարի մշակութեանը, որը զարգանալով, հետագայում վերածվել է քարի ինդուստրիայի:

Մարդկութեանը հայտնի առաջին կտրող գործիքները, գոնե Մերձավոր Արևելքում, պատրաստվել են մ. թ. ա. XII հազարամյակում՝ քարի (օբսիդիան, կայծքար) սուր կտորները ոսկրի կամ փայտի վրա ամրացնելով: Այդօրինակ գործիքները պատմութեանը հայտնի են «միկրոլիթային գործիքներ» անունով⁵: Ընդ որում, քարասակավ Մերձավոր Արևելքը օբսիդիանը տարել է Վանա լճի մերձակայքից, որով էլ, հավանաբար, պայմանավորված է նրա հայերեն վանակատ անվանումը:

Ժամանակի ընթացքում որոշ փայլուն ու գրավիչ քարեր օգտագործվել են որպես զարդ և հիմք ծառայել, որպեսզի առանձնացվեր թանկարժեք քարերի դասը: Հունական ավանդազրույցներից մեկի համաձայն, առաջին թանկարժեք քարը համարվում է Պրոմեթևսի երկաթե մատանու քարը⁶:

Քարերն, առաջինը ճանաչված լինելով, որպես քիչ թե շատ հայտնի նյութեր, ավելի ուշ ծառայել են իբրև շափանիշ նորահայտ նյութերը դասակարգելու համար: Պատմութեանը հայտնի է նման մի ուշագրավ օրինակ՝ կապված բնածին մետաղների հայտնաբերման հետ: Քանի որ բնածին մետաղի կտորները, քարի պես ամուր լինելով, նրա նման ոչ թե շարդվում, այլ կտրվում էին գործիքով, խմբավորվեցին որպես քարի նոր տեսակ՝ «տարօրինակ կամ կոելի քարեր» անունով: Դա պատմութեանը հայտնի նյութերի դասակարգման կամ տարբերակման առաջին օրինակն է:

³ Н. Я. Марр, Избранные работы, М.-Л., 1935, стр. 197.

⁴ К. Бакс, Богатства земных недр, М., 1986, стр. 57.

⁵ Дж. Меллаарт, Древнейшие цивилизации Древнего Востока, М., 1962, стр. 19.

⁶ Ն. Ա. Չոպ, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1980, էջ 134:

Պիրիսիուս Ավագի «Բնական պատմություն» հանրագիտական բնույթի գործը, որն ամփոփում է հին աշխարհից մեզ փոխանցված բնագիտական հիմնական ձեռքբերումները, ցավոք, ոչ մի տեղեկություն չի պարունակում Միջագետքի քաղաքակրթության նվաճումների՝ մասնավորապես շումերական հիշյալ քիմիական անվանակարգության մասին և, գրված լինելով նրանից շուրջ 2 հազար տարի անց, որոշ առումով ավելի սյարզունակ է: Այստեղ նույնպես քարերը դասակարգված են գրեթե նույն սկզբունքով և առանձնացվել են սովորական, ոչ մեծ և ոչ կոպիտ քարեր, խոշոր քարեր կամ լեռնապարներ, ողորկ ու կլորավուն գետաքարեր և թանկարժեք քարեր: Այս փաստը մյուս կողմից վկայում է նաև, որ բնության մասին մարդու պատկերացումները ոչ միայն դանդաղ են ձևավորվել, այլև հաստատվելուց հետո էական փոփոխությունների չեն ենթարկվել: Ուստի՝ նյութերի անվանումների առաջացման հանգամանքների և նրանց այս կամ այն հատկությունների կապի խնդիրը որոշակիորեն պատճառաբանված է:

Այդ առումով շատ հետաքրքրական է հայերեն «քար» բառը: Աճառյանը գտնում է, որ «քար» բառը բնիկ հայերեն է և առաջացել է հնդեվրոպական նախալեզվի «քար, կարծր» արմատից: Այն ցեղակիցների մեջ երևում է կրկնությամբ կամ ածանցական իմաստներով. այսպես, սանսկրիտ karkara «կարծր, կոշտ», հունարեն χαρχαρος «կարծր, անհարթ, խոպոտ» (քար, ճամբայ, ձայն)⁷ և այլն: Հեղինակն այնուհետև համադրում է տարրեր լեզուներով քարի անվանումները, որոնք բառացիորեն աղբրսվում են «քարքարոտ զետին, քարի դեզ, ուժեղ, ամուր, պինդ, լերկ ժայռ» և այդ կարգի այլ հասկացությունների հետ: Այսինքն՝ ինչպես հայերեն «քար» բառը, այնպես էլ ցեղակից մի շարք լեզուների համապատասխան բառերը, իմաստով արտահայտում են ամրություն, կարծրություն, պնդություն, հատկություններ, որոնք առավել բնորոշ են քարին:

Քարերի կիրառական նշանակությունից կախված ժամանակի բնթացքում գանազանվել են գալլախազը, կաձքարը, որձաքարը, վեմը և այլն:

Գ ա յ լ ա խ ա զ ր, որի համարժեքներն են. հունարեն՝ σμυρτης λυθος, լատիներեն՝ Smyris, Աճառյանը ներկայացնում է իբրև «մի տեսակ կարծր բար»⁸: Հստ նրա, բառն առաջացել է «գալլ» և «խազ» բաղադրիչներից: Վերջինս, որ առանձին չի գործածվում, մեր մատենագրությունը փոխառել է պարսկերենից (xāz— «խազ») և նշանակում է «քար, որով քերում են ոտքի կեղտը»: Չնայած, ըստ տրամաբանության, դա պետք է շեշտարը լիներ, բայց այստեղ այն ունի զուտ «քար» իմաստը: Հետևաբար՝ գալլախազ նշանակում է գալլի քար, գալլաքար: Հանդիպում է նաև գալլահազ ձևով: Այս քարի գալլ վանելու հատկության մասին ավանդապատում է գրառել Աբեղյանը¹⁰:

Վաղ անցյալում գործածված քարե դանակները պատրաստված են եղել հատկապես հանքից հանված գալլախազից, որովհետև այն, գետներեսին գտնվող քարերի համեմատ ավելի ջուր պարունակելու շնորհիվ, շատ ավելի կարծր է: Նրանից պատրաստված կտրող գործիքներով հնարավոր է եղել ծառ կտրել, ինչպես՝ երկաթե կացնով: Այդ գործիքներն Իսրայելում օգտագործվել են թլփատման, ծգիպտոսում՝ դիահերձման նպատակներով: Սուրբ գրքի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչներն առաջին անգամ դրել են քարի

⁷ Каппа Илияна Секунда Естественная история, С. — Петербургъ, 1819.

⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 558:

⁹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 513:

¹⁰ M. Abeglian, Der Armenische Volksglaube, Leipzig, 1899.

անվան իմաստային թարգմանությունը՝ «սուր քար», «սուր դանակ»¹¹: Գայլախազ եզրույթը հայտնվել է ավելի ուշ, մեր նախնայաց ճառընտիրներում. «Թլփատեաց սրովք գայլախազիք զորդիսն Իսրայէլի»¹²:

Գայլախազը մեզանում կոչվում է նաև կայծքար և խիստ քար: «Կայծքարի» ծագումն ականհայտ է՝ «քար, որին հարվածելիս կայծ է առաջանում»: Եվրոպայում առաջին կրակն ստացվել է մեզանից շուրջ 40 հազար տարի առաջ՝ կայծքարը երկաթի կոլչեդանին հարվածելով: Այս հանգամանքը միաժամանակ պատճառ է դարձել, որպեսզի հրաքար (հրահան) կոչվեր երկաթի կոլչեդանը, որը մինչ այդ, մյուս ամուր քարերի նման, օգտագործվում էր աշխատանքային գործիք պատրաստելու համար: Երեմյանը, սակայն, զրտնում է, որ գայլախազն ու կայծքարը ամբողջովին նույնական չեն, դրանք ոչ միայն տարբեր կերպ են կոչվում լատիներեն, համապատասխանաբար՝ Smyris և Silex, այլև գործածվում են տարբեր նպատակներով. առաջինը՝ որպես հղկաքար (այստեղից նաև հղկափոշու զմունիտ անունը), երկրորդը՝ որպես հրահան¹³: Իսկ ինչ վերաբերում է «խիստ քար» արտահայտությանը, ապա այն եզրույթային նշանակություն չունի, այլ «խիստ» ածականով պարզպես ուժեղացված է քարի՝ ամուր, կարծր լինելու հատկությունը:

Որ ծ ա ք ա ր ր ր նույնպես Աճառյանը ներկայացնում է իբրև «մի տեսակ ամուր քար»¹⁴: Այդպես մեզանում կոչվել են հայտնի բազալտը, գրանիտը և այլն: Անվանումը, ինչպես տեսնում ենք, մատնանշում է քարի ործ, այն է՝ շմասնատվող, չբաժանվող, չբազմացող հատկությունը: Այն բուն հայկական է, կազմված է բնիկ հայերեն «ործ» և «քար» բառերից:

Վ Ե մ ր հունարեն πέτρα-ի և լատիներեն lapis-ի համարժեքն է: Այդպես հայերենում կոչվում են մեծ սալերը, ապառաժ քարերը: Այդպես է թարգմանվել նաև Սուրբ գրքում հայտնի Արարիայի ապառաժներում կառուցված, երբայից են Սելա անվամբ հայտնի վիճափոր քաղաքը¹⁵:

Ըստ Աճառյանի, «վեմ» եզրույթը փոխառված է պահլավերեն vēm, vim— «քար, շինուածքի քար», զենդերեն vaēma— «քարածերպ, ժայռերի ճեղք» եզրույթներից¹⁶: Փաստորեն, «վեմը» պահլավերեն «քար» բառն է, որը մեր լեզուն փոխառել և օգտագործում է քարերի հատուկ մի տեսակը (խոշոր, սալ քար, ապառաժ) անվանելու համար: Այն համապատասխանում է Պլինիոս Ավագի հիշատակած Saxum քարատեսակին¹⁷:

Այսպիսով, հայերեն «քար» եզրույթն իմաստով արտահայտում և բովանդակում է քարի առաջինը ճանաչված ֆիզիկական հատկությունները՝ պնդությունը, կարծրությունը, ամրությունը, իսկ նրա հիման վրա կազմված մյուս բաղադրյալ անունները (քարերի առանձին տեսակների անունները) բնորոշում են քարի հիշյալ հատկություններից մեկը:

«Հ ո դ ր», ըստ Աճառյանի, բնիկ հայերեն բառ է և սերել է հնդեվրոպական նախալեզվի pol ձևից: Ցեղակիցներն են ռուսերեն полын «բաց, ազատ, չծածկուած, դատարկ», լատիներեն palam «բաց, ականյայտնի, հրապարակաւ»¹⁸ և այլն: Pel, pol «բանալ, տարածել, պարզել, փռել» պարզ արմատից են առաջացել հայերեն հոլ «մերկ, բաց» և հող բառերը: Աճառ-

¹¹ Աստուածաշունչ, Օտուտգարդ, 1989, Ել. Դ 23, Յես. Ե 2:

¹² Նոր Բառգիրք Հայկագետն լեզուի, Ե., 1979, Բ. 1, էջ 527:

¹³ «Բազմապետ», 1900, էջ 442:

¹⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, Բ. 3, էջ 582:

¹⁵ Բառարան սուրբ գրք, Երևան, 1992, էջ 522—524:

¹⁶ Հ. Աճառյան, ՀԱԲ, Բ. 4, էջ 335—336:

¹⁷ Кайя Плиния Секунда Естественная история, стр. 166.

¹⁸ Հ. Աճառյան, ՀԱԲ, Բ. 3, էջ 109—111:

յանը շի ակնարկում հոլ-հող անցման մասին, բայց հայերենում նման հրնշյունափոխությունը տվյալ պարագայում չի բացառվում: Նման ենթադրություն պայմաններում «հող» բառին նույնպես կարելի է վերագրել «մերկ, բաց, ազատ, նաև՝ դաշտ, բացավայր» իմաստները: Իսկ դրա հիմնավորումը կարող ենք փնտրել վաղ անցյալում ապրած մարդու տնտեսական գործունեության մեջ: Հայտնի է, որ նախնադարյան հասարակարգում (հատկապես քարի դարում) մարդու տնտեսական գործունեության հիմնական ձևերից մեկը եղել է հավաքչությունը՝ սննդի և այլ կարիքների համար անհրաժեշտ նյութերի (բույսեր, արմատներ, պտուղներ, ձվեր, մեղր, նաև միջատներ, զենուններ) հավաքումը: Այդ տնտեսաձևը զուգորդվել է որսորդության ու ձրկնորսության հետ: Բայց, եթե որսը կամ ձկնորսությունը կատարվել են որոշակի տեղերում, ապա հավաքչության համար անհրաժեշտ էր մեծ տարածություն: Որպեսզի հնարավոր լիներ բավարար քանակով անհրաժեշտ նյութեր հավաքել, որոնք փոխած էին գետներեսին կամ անմիջապես նրա տակ, պետք էր մեծ տարածություններ անցնել: Ուստի՝ բնական է ենթադրել, որ գետինն այդ շրջանում կարող էր առաջացնել բաց, դատարկ տարածության զգացողություն, որը և դրվել է քոլ արմատի և նրանից սերած հոլ և հող բառերի մեջ:

Սակայն դժվար չէ այս ենթադրությանը հակադրել առաջին մարդու՝ Աշամի, հողից ստեղծված լինելու փաստը («Աստուածը հողի փոշուցը շինեց մարդը. և նորա անգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղաւ»)՝¹⁹ և փորձել աղերսներ փնտրել «մարդ» և «հող» բառերի միջև: Դա շատ հստակորեն դիտվում է լատիներեն homo — մարդ և humus — հող բառերում: Բայց մեր լեզուն «մարդ»²⁰ բառը վերցրել է հնդեվրոպական նախալեզվի mroto ձևից, որը նշանակում է մեռնել: Այսինքն՝ հայերեն «մարդ» բառը բովանդակում է ոչ թե մարդ արարածի հողեղեն, այլ նրա մահանացու լինելու իմաստը:

Այսպիսով, բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հայերեն «հող» բառը, որն ունի «բաց, մերկ, դաշտ» իմաստները, իր մեջ բովանդակում է վաղ անցյալում ապրած մարդու հավաքչական տնտեսաձևի արձագանքը:

Կա վր հեղաշրջումային նշանակություն է ունեցել մարդու կյանքում. այն առաջին շինանյութն է, որով մարդը կառուցել է կացարան և քարայրից դուրս գալու հնարավորություն ստացել: Պլինիոս Ավագի տեղեկությունների համաձայն²¹, մարդկանց առաջին կացարանները կառուցվել են տիղմացելով՝ ժիժեռնակի բների նմանությամբ: Այդ նույն շրջանում կալն օգտագործվել է նաև ամաններ, ապա՝ արձանիկներ պատրաստելու համար: Իսկ շինարարական նպատակներով այն առաջինն օգտագործվել է Բաբելոնում ու Նինվեում: Հայկական լեռնաշխարհի տարածքում հարդախառն կավից պատրաստված աղյուսների գործածությունը հայտնի է դեռևս մ. թ. ա. VII հազարամյակից: Մ. թ. ա. IV հազարամյակի սկիզբը համարվում է «խեցեգործական նեոլիթի» նոր դարաշրջան, երբ հայտնի էր արդեն թրծումը և խեցե ամանների կոպիտ զարդանախշումը: Մ. թ. ա. III հազարամյակից Մեծամորում պատրաստվել են խեցե կրակարաններ, հալոցի ձուլածո կազապարներ:

¹⁹ Աստուածաշունչ, ծճ. Բ 7:

²⁰ Հ. Աճառյան, ՀԱԲ, Բ. 3, էջ 279:

²¹ Кайя Плиния Секунда Естественная история, стр. 176—177.

Մալխասյանցի բացատրական բառարանում²² կազմը ներկայացված է որպես պարարտ, կակուղ և տարածուն հողի տեսակ, որի զանազան տեսակներից շինում են աղյուսներ, կավեղեն և խեցեղեն ամաններ, որ լրավի մեջ թրծելով քարանում և այլևս չի կակղում: «Կավը» հայերենում ունի նաև հողի խմոր, ցեխ իմաստները²³: Կավից խեցեղեն անոթ շինելու՝ սուրբբրակյան ժամանակների միջոցը հետևյալն էր՝ «կալը կը կոխուէր ոտիւք լմելու... յետոյ դրզան վրայ կաւին կը տրուէր ձև անօթոյ, որ ապա փռան մէջ կը թրծուէր»²⁴: Իսկ բրուտի արհեստը օրինակ է բերվում Աստուց մարդու կախումը ցույց տալու համար. «Ահա ինչպէս է կալը բրուտին ձեռքին մէջը՝ դուք իմ ձեռքին մէջը այնպէս էք»²⁵ և կամ «Մենք կալ, և Գու ստեղծիչ մեր»²⁶:

Կավը ոչ միայն լայնորեն օգտագործվել է Հայկական լեռնաշխարհում, այլև նրա մի տեսակը արտահանվել է, որը հայտնի է որպես հայկական կավ՝ հայկավ: Այդուհանդերձ, «կավ» բառի ծագումը ստույգ պարզված չէ: Այն հնչողութեամբ նման է պարսկերեն քեվ, քեպի կամ քիլ բառերին, որոնք նշանակում են «պինդ կավ» կամ «կավիճ»²⁷: «Կավիճ» եզրույթի առաջացումը դժվար չէ պատկերացնել, այն կազմվել է կավ և իճ ետնադիր մասնիկի միացումով, երբ հայերենում «կավ» եզրույթն արդեն արմատավորվել էր: Մնում է ընդունել, որ «կավ» բառը հայերենը փոխառել է Հայկական լեռնաշխարհի հարավային հարևան երկրների լեզուներից (հիմնականում պարսկերեն), որտեղից մեզ է փոխանցվել նաև կավագործությունը (անոթների, աղյուսների պատրաստում) և արմատավորվել որպես տնտեսական գործունեության ձև:

Կերակրի աղը տարբեր ժողովուրդների հավատալիքներում համարվում է Աստծո պարգևած նյութ: Սուրբ գրքում այն հիշատակվում է իր զորութեան և կերակրի մեջ ունեցած կարևորության համար: (Աղ խառնում են նաև խնկին): Հետ Սուրբ գրքի, մարդիկ «երկրի աղն» են, իսկ շնորհալի և ճշմարիտ խոսքերը՝ լեզվի աղը: Աղը տեղականության ու անապականության, հյուրասիրության, բարեկամության, նաև հավատարմության նշանակ է: Այն միաժամանակ անպտղության ու ամայության խորհրդանիշ է: Երկրի աղոտ կամ աղտաղտին լինելը Սուրբ գրքում հիշատակվում է Սողոմոն և Գոմորի համար. «որոնց գետինն աղի է, կծու և աղտաղտ ջուրերով ծածկուած»²⁸:

Աղի բազմազան կիրառություններն ու բառի ձեռք բերած բազմանշանակ իմաստները պայմանավորված են նրան բնորոշ բազմաթիվ հատկություններով և առաջին հերթին՝ սննդում օգտագործվելու, սննդամթերքը պահպանելու, ապխտիչ և հականեխիչ հատկություններով:

Մառի կարծիքով²⁹, աղի որոշ հատկություններ (հատկապես ապխտիչ ու հականեխիչ) մարդկությունն ավելի վաղ վերագրել է արևին: Դա հիմք է ծառայել, որ նա «աղ» և «արև» բառերը ծագումնաբանորեն կապի միմյանց հետ և երկուսն էլ համարի միևնույն «ալ» նախատիպից սերած: Հայերենում ասվածի ուղղակի գրսևորումները պահպանվել են «անալի» բառում: Մառը

²² Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1944—45, հ. 2, էջ 416:

²³ Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1079:

²⁴ Բառարան սուրբ գրք, էջ 270:

²⁵ Նույն տեղում, էջ 102:

²⁶ Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1079:

²⁷ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 561:

²⁸ Բառարան սուրբ գրք, էջ 20:

²⁹ Н. Я. Март, Избранные работы, т. 5, стр. 477.

նույնպիսի կապ տեսնում է նաև «աղ» և «կրակ» բառերի միջև, որոնց նույն «ալ» նախատիպը, գոնե վրացերենում, միաժամանակ ունի նաև կրակի և բոցի իմաստ³⁰: Իսկ հայերենում հայտնի են ալ կրակ, ալ բոց արտահայտությունները, որտեղ «ալ» ածականը խորհրդանշում է կրակի թնդությունը կամ բոցի գույնը:

Աճառայանը նույնպես գտնում է, որ հայերեն «աղ», նաև «ալ» (անալի), հունարեն ἄλ-ς, ինչպես նաև լատիներեն sal և նրան մերձավոր լեզուներով աղանուններն ունեն նույն «ալ» արմատը³¹, հետևաբար բոլորովին նման չեն երբայերեն մեյաֆ կամ ասորերեն մլխա նույնիմաստ բառերին³²: Իսկ Գուրյանի կարծիքով³³, Աստվածաշնչում հիշատակվող մետաղների ու հանածոների անուններից հայերեն են միայն «արծաթն» ու «աղը»:

Մարդկությունն աղը գործածում է դեռևս մ. թ. ա. V հազարամյակից: Այդ հանգամանքը որոշակիորեն նպաստել է, որպեսզի հավաքչությամբ ու որսորդությամբ զբաղվող մարդիկ անցնեին նստակեցության:

Աղի արդյունահանությունը Եվրոպայում առաջինն սկսել են կելտերը մ. թ. ա. I հազարամյակում՝ աղի ջրերի գոլորշիացմամբ³⁴: Մեր թվարկության սկզբին Պլինիոս Ավագը տարբերակել է բնական և արհեստական աղեր³⁵: Արհեստական է համարել ջրերից՝ թանձրացման կամ գոլորշիացման ճանապարհով ստացված աղերը: Նա հիշատակում է նաև աղի գոյությունը Հայաստանում՝ այնտեղ, որտեղով հոսում է Ալիս (Հալիս) գետը³⁶: Մեզանում Դարանաղի և Մանանաղի գավառանունների առաջացումը խոսում է այդ գավառներում աղի հանքերի գոյության մասին, իսկ Վանա լճի հյուսիսային եզերքին ընկած Աղիովիտ գավառի անունով կոչված լճի «աղի» անունը (աղի ծովակ) հիշատակում է նաև Մովսես Խորենացին³⁷:

Միջնադարյան Հայաստանում աղի արդյունահանությունը հասել է այնպիսի ծավալների, որ աղը արտահանվել և դրսում իրացվել է հայկական աղ անունով:

Բնական է ենթադրել, որ սկզբնական շրջանում աղ կոչվել է միայն կերակրի աղը, այն, ինչ մարդը հայտնաբերման օրվանից մինչև օրս օգտագործում է սննդի մեջ: Շատ ավելի ուշ աղ կոչվել են նաև բոլոր այն նյութերը, որոնք տեսքով ու բնորոշ դառնահամով հիշեցնում էին կերակրի աղը, ստացվում էին հանքից կամ աղի ջրերի գոլորշիացմամբ: Այսինքն՝ «աղ» բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերել նյութերի որոշակի դասի (աղերի) ընդհանրական անվան իմաստ, և այդ պատճառով աղերը, քարերից, կավից, մետաղներից հետո, զբաղեցնում են նյութերի դասակարգման ժամանակագրության հերթական սանդղակը:

Աղերը, մինչև այժմիայի շրջանի ավարտը (XVI դ.), ճանաչվել են որպես պարզ նյութեր: Ավելին, երբ այժմիկոսներին այլևս չբավարարեց արիստոտելյան 4 նախաստեղծ տարրերի՝ հող, ջուր, օդ, կրակ, տեսությունը,

³⁰ Նույն տեղում:

³¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 114—116:

³² «Բազմավեպ», 1898, էջ 461:

³³ Խ. Ս. Գուրյան, Մետրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ, Գահրե, 1835, էջ 46:

³⁴ К. Бакс, Богатства земных недр, М., 1986, стр. 37—39.

³⁵ Кайя Плиния Секунда Естественная история, стр. 277.

³⁶ Հ. Ղ. Ինճիբեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վեներիկ, 1835, էջ 170:

³⁷ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, գիրք Ա, գլ. ԺԲ, հմտ. Ս. Ց. Երեմյան, Հայալուսնը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 83:

առաջ քաշեցին մետաղների՝ սնդիկ, ծծումբ, ալվի ռւշ՝ նաև աղ նախասեր-
մերից կազմված լինելու վարկածը: Ընդ որում, սնդիկին վերագրվեց մետաղ-
ների (հալած) հոսունությունը, ծծմբին՝ այրելիությունը պայմանավորող հատ-
կությունները, իսկ աղը համարվեց նրանց կմախքը: Նման ենթադրության
համար, աղի բազմապիսի հատկություններից զատ, հիմք է ծառայել նաև
այն հանգամանքը, որ մետաղների այրման ժամանակ առաջանում էին աղեր
կամ աղակերպ նյութեր:

Այդուհանդերձ, հազարամյակների ճանապարհ անցած կերակրի աղին
դեռևս լուրջ փորձություն էր սպասում գիտական քիմիայի ձևավորման նա-
խաշեմին: Այդ ժամանակ արդեն հայտնի էր, որ աղերը բարդ նյութեր են
և, ըստ Լավուազիեի տեսության, կազմված են թթուներից (թթվային ռադի-
կալներ) ու աղակազմ հիմքերից (այդպես էին կոչվում աղերի ոչ թթվային
բաղադրամասերը): Լավուազիեն համոզված էր նաև, որ թթվային ռադիկալ-
ները պարտադիր կարգով պարունակում են թթվությունը պայմանավորող
մի նյութ՝ թթվածին (այս անվանումը նույնպես նա է կնքել): Կերակրի աղի
թթվային ռադիկալն այդ ժամանակ դեռևս բացահայտված չէր, բայց Լա-
վուազիեի անառարկելի հեղինակության շնորհիվ ենթադրվեց, որ գոյություն
ունի թթվածին պարունակող համապատասխան ռադիկալը, որն անվանվեց
ծովային թթու (կերակրի աղը հայտնի էր նաև որպես ծովաղ) կամ աղային
թթու: Այդ տեսակետը պահպանվեց ալվի քան 25 տարի, մինչև 1811-ին
անգլիացի քիմիկոս Հ. Դևին ցույց տվեց, որ կերակրի աղի թթվային ռադի-
կալը թթվածին չի պարունակում (այն պարզ նյութ է, ներկայիս քլորը): Այդ
հայտնագործությունը միանգամից հարվածի տակ դրեց մինչ այդ ընդուն-
ված մի շարք դրույթներ, այդ թվում նաև՝ կերակրի աղի լիարժեք աղ լինելու
խնդիրը: Փաստորեն, Դևին հայտնագործել էր աղի նոր տեսակ, որը, լինելով
առաջին, դասական աղը, չէր համապատասխանում ընդունված գիտական
սահմանմանը:

Հանգուցալուծումը կատարվեց հետևյալ կերպ. ենթադրվեց, որ կերակրի
աղն իսկապես լիարժեք աղ չէ և, լիարժեք աղերից (թթվածին պարունակող)
զանազանելու համար, այն անվանցին աղակերպ, աղանման (հունարեն՝
հալոիդ), իսկ համապատասխան թթվային ռադիկալը՝ աղածին (հալոգեն):
Այս, փաստորեն սխալ, անունները արմատավորվեցին ու մինչև օրս օգտա-
գործվում են քիմիական գրականության մեջ:

Սա մի դասական օրինակ է, որը ցույց է տալիս նախ տեսական (նաև
թյուր) պատկերացումների և անվանակարգության սկզբունքների փոխադարձ
կապը, ապա նաև՝ անվանակարգության պահպանողականությունն ու որոշակի
այսպանականությունը:

Աղերի առաջին գիտական նկարագրությունը հայ իրականության մեջ
տվել են Վանանդեցիները³⁶, որոնք զանազանել են հասարակ և առանձին
տեսակի աղեր: Հասարակ աղերը նրանք ստորաբաժանել են բնականի և ար-
հեստականի, ինչպես: Պլինիոս Ավագը: Բնական աղի ստացման աղբյուր են
համարել հողը, ավալը, ծովը, իսկ արհեստական աղերինը (ղալե աղ, մեզի
աղ, աղբաղ և այլն)՝ տարբեր հեղուկների եփումը, շորացումը, կրացումը
և այլն: Հեղինակները, որպես առանձին աղեր, հիշատակում են նաթրոն ա-
ղը, սևալեղը, պաղլեղը, նաշադիրն ու զառիկը:

Այսպիսով, աղ անվան առաջացումը պայմանավորված է աղի ապխտիչ,
հականեխիչ և սննդամթերքը պահպանելու հատկություններով: Եվ քանի որ

³⁶ Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, Բնաբանութիւն իմաստասիրական կամ տա-
րերաբանութիւն, Յ՝Ամստերդամ, 1702, էջ 58—65:

նման հատկութիւններ մարդկութիւնն ավելի վաղ վերագրել է նաև արևին, ուստի, տրամաբանական է ընդունել, որ «արև» և «աղ» բառերը սերել են միևնույն «ալ» նախատիպից: Միաժամանակ, աղ, աղակերպ, աղածին և դրույթների արմատավորումն ու զուգահեռ գործածութիւնը գրականութեան մեջ վկայում է անվանակարգութեան և՛ պահպանողականութեան, և՛ որոշ պայմանականութեան մասին:

Ս ծ մ ք ի մասին առաջին պատկերացումները գալիս են խոր անցյալից և կապված են նրա այրվելու և հեղձուցիչ գազ առաջացնելու հատկութեան հետ: «Սոդոմ և դաշտին ուրիշ քաղաքները կործանեցան «ծծմբով և կրակով»³⁹: «Ոչ մի նյութ այնքան լավ չի այրվում, որքան ծծումբը, հետևաբար այն իր մեջ մեծ հրո ուժ ունի», — գրում է Պլինիոս Ավագը⁴⁰: Անմնացորդ այրվելու և «մեծ հրո ուժ» ունենալու հատկութիւններն են, անտարակույս, հիմք հանդիսացել, որպեսզի ալքիմիկոսները ծծումբը համարեին նյութերի այրելիութիւնը պայմանավորող նախասերմ, իսկ XVII դարում այն ընդունվել որպես ֆլոգիստոնի նախատիպ: Հետևաբար, «ծծումբ» բառի արմատը նյութի այրելիութեան մեջ փնտրելը որոշակիորեն տրամաբանված է:

«Սծումբ» բառը հայերենում օգտագործվում է որպես հունարեն Θειον, լատիններեն sulphur բառերի համարժեք: Այն ունի նաև «ծծում, ծրծում» հոմանիշները⁴¹: Աճառյանը գտնում է, որ բառի հնագույն ձևը ծծում-ն է, որին «բ» ավելացել է հետագայում, իսկ արմատը համարվում է ծում-ը: Վերջինս հանդես է եկել կրկնութեամբ ծումծում, և հետագա ձևափոխմամբ վերածվել է նախ ծծում-ի, ապա՝ ծծումբ-ի: Այդ արմատի կրկնութեամբ հանդես գալու հատկութիւնը պահպանվել է վրացերեն ծծումբ՝ ծումծումա, բառի մեջ: Հ. Տերվիշյանը «ծուխ» և «ծծումբ» բառերը համադրում է սանսկրիտ dhū, հունարեն θύω, սանսկրիտ dhūma, լատիններեն fumus «ծուխ», հունարեն θε΄ειον «ծծումբ» ձևերի հետ և բոլորը միասին հանում dhū «փչել, ծխել» արմատից⁴²:

Հյունքեարպեյեանոյանը «ծծումբը» մեկնում է իբրև ծծ-ող և ըմպ-ող ու այն կապում է առասպելական Վուլկանոսի (Հեփեստոսի) հետ. «Ինչպես նրա կնոջ՝ Աֆրոդիտի ծիածան կամարն է ջրերը ծծում ու խմում, այնպես էլ Վուլկանոսն է ծծում և ըմպում կրակն ու ծուխը, որոնք առատ ծծմբի հետ արձակվում են նրան նվիրված Վուլկանիա կղզուց»⁴³: Այստեղից է ծագում նաև կառուչուկի ռետինացման երևութի ընդունված անվանումը՝ վուլկանա-դում:

Երեմյանը «ծծումբը» լատիններեն sulphur-ի հետ բխցնում է սանսկրիտ sulvari — բառից՝ c = ծծ, u = ու, v = բ տառադարձութեամբ, և նշում, որ «ծրծումբ» բառի հիմքը պետք է փնտրել եվրոպական համապատասխան բառերի հետ միասին և ոչ թե ասորերեն՝ քիպրիթ, եբրայերեն՝ կոֆրիդ, արաբերեն՝ քիբիբթ և պարսկերեն՝ քիբիբտ բառերի մեջ⁴⁴:

«Սծումբ» բառի հիմքի վրա կազմվել և հատկապես XIX դարի բնալուծական գրականութեան մեջ օգտագործվել են ծծմբատ (ծծմբական թթվի աղեր), ծծմբակ (ծծմբային թթվի աղեր), ծծմբուկ, ծծմբիտ և այլ անվանումներ:

³⁹ Բառարան սուրբ գրոց, էջ 255:

⁴⁰ Кайя Плиния Секунда Естественная история, стр. 336—337.

⁴¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 462:

⁴² Նույն տեղում:

⁴³ Հ. Հիւնքեարպեյեանեան, Ստուգարանական բառարան հայ լեզուի, Կ. Պոլիս, 1894, էջ 185—186:

⁴⁴ «Բազմապես», 1900, էջ 104:

Այսպիսով, «ծծուժք» անվանումը, որն ամենայն հավանականությամբ «երևի է սանսկրիտ dhū «ծխել, փչել» արմատից, արտահայտում է նյութի այրվելու, ծխալու հատկությունը, որով այն ճանաչվելու գործածությունն է գտել:

Ածուխ կոչվում է սև, փխրուն, կես մետաղական փայլով, գրեթե ամբողջությամբ ածխածնից բաղկացած նյութը: Իսկ բառի հնագույն ձևը ածուղ է: Աճառյանը գտնում է, որ բառի վերջին «ղ»-ն, կրելով «ծուխ» բառի ազդեցությունը, հետագայում վերածվել է «խ»-ի⁴⁵:

Երեմյանն այդ բառը ստուգաբանում է որպես ա-ծուխ⁴⁶, այսինքն՝ ան-ծուխ, ծուխ շունեցող, գտնելով, միաժամանակ, որ այն հուն. ἄνθραξ— ածուխ կամ այլ բառի տառադարձությունն է: Ծիշտ նույնպիսի բացատրություն ենք գտնում նաև «Հանդես Ամսօրեայում», այսպես. «Ածուխ կամ ածուղ. իբր անծուխ, զի ոչ եւս ծխի իբրեւ զփայտ»: Նույն աղբյուրից տեղեկանում ենք նաև, որ Հ. Տերվիշյանն ածուխ բառը բխցնում է սանսկրիտ ag, ang արմատից: Հյուբշմանն այն դասել է բնիկ հայերեն բառերի շարքը, որը, սակայն, առարկում է Մենելիշյանը: Վերջինս սխալ է համարում նաև այն հունարեն ἄσβολη «մուր» կամ սանսկրիտ anḡāra բառերի հետ համեմատելը⁴⁷:

Աստվածաշնչում «ածուխ» բառն օգտագործվել է հունարեն ἄσβολη— մուր բառի դիմաց. «Թխացան քան զածուխ տեսիլք իւրեանց»⁴⁸, Իսկ բառի «ածուղ» տարբերակը առաջինն օգտագործել է Փավստոս Բուզանդը⁴⁹: Վանանդեցիների մոտ հանդիպում են նաև «ածուխ» բառի անձող, ինչպես նաև բարբառային՝ գործելի տարբերակները: XIX դ. վերջին արդեն շրջանառության մեջ են դրվել ածխածին, ածխածնիտ, ածխածնուտ, ածխի թթու, ածխաթթու, բնածուխ եզրույթները: Իսկ Հ. Գուրգենյանը գրում է. «Գիտնալու է, որ ածուխին զուտն ալ հասարակ ածուխներէն զատելու համար... մենք դարձյալ մեր կանոնով առաջինին ըսինք բնածուխ, երկրորդին՝ ածուխ»⁵⁰:

Ածուխ անվան առաջացումը, ինչպես տեսնում ենք, մեծ մասամբ պայմանավորված է նյութի բնորոշ՝ անծուխ այրվելու, հատկությամբ:

Բորակ արտահայտությունը հայ մատենագիրներից առաջինն օգտագործել է Ագաթանգեղոսը. «Նւ ետ հրաման բերել աղ և բորակ և բարկ քացախ...»⁵¹: Սուրբ գրքում այդ բառն օգտագործվել է եբրայերեն nether բառի դիմաց⁵², հունարեն νιτρον և լատիներեն nitrum բառերին համարժեք:

Աճառյանի կարծիքով, «բորակ» բառը հայերենը փոխառել է պահլավերեն bōrak ձևից, իսկ պարսկերեն bōra «բորակ» բառից են փոխառվել նրա ասորերեն, վրացերեն, արաբերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, իտալերեն, ռուսերեն և այլ հոմանիշներ: Այսինքն՝ բազմաթիվ լեզուներով ներկայումս օգտագործվող «բորակ» բառը կամ նրա համահունչ համարժեքները սկիզբ են առնում պարսկերեն կամ պահլավերեն նախահիմքից, որի բուն նշանակությունը, գոնե մեզ, դեռևս անհայտ է: Մնում է ենթադրել, որ հայերենը դա փոխառել է այն ժամանակ, երբ համապատասխան նյութը ներմուծվել է օգտագործվել է Հայաստանում:

Միաժամանակ նշենք, որ բորակ (լատ. Nitrum, հուն. νιτρον) վաղ անց-

⁴⁵ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 102—103:

⁴⁶ «Բազմապեպ», 1898, էջ 480, 545:

⁴⁷ «Հանդես Ամսօրեա», 1905, էջ 348—348:

⁴⁸ Աստուածաշունչ, Ծառուգարտ, 1989, Երեւ. Ողբ. Դ. 8:

⁴⁹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1968, գլ. Ի:

⁵⁰ «Բազմապեպ», 1858, էջ 58:

⁵¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, 106:

⁵² Աստուածաշունչ, Երեւ. Բ. 22:

յալում կոչվել են ոչ թե ժամանակակից բորակները (նիտրատները), այլ նատրիումի ածխաթթվական աղերը (կարբոնատները), որոնք հայտնի են նաև սողա տեխնիկական անունով: Ուատի նյութերի շփոթ շառաչացնելու համար, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գրականության մեջ «բորակ» անվան գործածության ժամանակին: Այսպես, օրինակ, Պլինիոս Ավագն իր «Nitram» (բորակ) հոդվածում գրում է. «բորակը քրքրում (ուտում) է կոշիկների ներբանները, ծծմբի հետ եփելիս քարանում է... օգտագործում են ապակի պատրաստելու համար»⁵³: Թվարկված հատկություններն ու օգտագործման նպատակը ակնհայտորեն վերաբերում են սողային: Իսկ Սուրբ գրքում դասված է ավելի ուղղակիորեն. բորակն այնտեղ հիշատակվում է ոչ թե իբրև վառողի բաղադրամաս, այլ հանքային սողայի զանազան խառնուրդներից բաղկացած նյութ՝ նիտրոն, որը եռում է քացախի հետ, իսկ ձեթի հետ միանալով առաջացնում է կարծր օճառի մի տեսակ⁵⁴:

Հակառակ դրան, Վանանդեցիների ճանաչած նաթրոն աղը, որը նրանք դասել են առանձին աղերի խմբին և կոչվում է նաև նաթրում, նիտրում, լիտրոն, նիտրոն, բարակ, բօրա, շօրա, ներկայիս բորակն է, որովհետև, «նաթրոն աղից կամ շօրայից «ի ծծմբոյ և ի գործելեաց (որ անձող կամ ածուխ ևս ասի) յօրինի և կազմի հրային փոշին՝ որ գոեհկորէն բարութ ձայնի»⁵⁵: Նրանք միաժամանակ նշում են նաթրոն աղի և հասարակ աղի տարբերությունը. «Հասարակ աղ ոչ հրանայ և ոչ բոցանայ, այլ նատրոնն հրանայ և բոցանայ»⁵⁶: Այսինքն, Վանանդեցիների՝ նաթրոն աղի բորակ լինելու հանդամանքը առարկություն չի վերցնում, ուստի, նրանց ժամանակներից սկսած (XVIII դ. սկիզբ) մեզանում «բորակ» (բարակ) եզրույթն օգտագործվել է արդեն «նիտրատ, սելիտրա» իմաստով:

Այդուհանդերձ, այդ անվան երկիմաստ գործածությունը մեզանում շարունակվել է մինչև XIX դ. վերջը, որի մասին վկայում է Մենեվիշյանի գրքի եզրութարանությունը: Մենեվիշյանը Ֆրանսերեն natron (նատրոն) եզրույթը, որով կոչված է նատրիումի կարբոնատը ($\text{Na}_2\text{CO}_3 \cdot 10\text{H}_2\text{O}$), հայերեն թարգմանել է բօրակ, սողա, իսկ հայտնի շիլիական բորակի (NaNO_3) համար օգտագործել է նատրոնի բորակ կամ նատրիումի նիտրոն անվանումները⁵⁷:

Այսպիսով, «բորակ» եզրույթը ներկայիս իմաստով մեզանում գործածվում է շուրջ 300 տարի, հայերենն այն փոխառել է հարևան պարսկերենից կամ պահլավերենից, որի բուն իմաստն անհայտ է: Հավանաբար այն ներմուծվել է շատ վաղ անցյալում՝ համապատասխան նյութի հետ, որը, սակայն, մեր լեզուն յուրացնելով, դարձրել է սեփական բառապաշարի անբաժան մասը:

Արջասպ, առջասպ, առճասպ բառերը հայերենում օգտագործվում են հուն. Χαλχανθον, լատ. chalcantum, atrmentum, vitriolum բառերի դիմաց: Հայերեն բառի առաջին գործածությունը հավանաբար վերաբերում է VII դարի մատենագիր Վրթանես Քերթողին⁵⁸: Բառը, որն ըստ Աճառյանի բարգաված է արչն «սև» և «ասպ» (անծանոթ) բաղադրիչներից⁵⁹, ծագումնաբանորեն

⁵³ Кайя Плиния Секунда Естественная история, стр. 231—236.

⁵⁴ Բառարան սուրբ գրք, էջ 99:

⁵⁵ Մատթէոս և Ղուկաս Վանանդեցիներ, Բնաբանութիւն իմաստասիրական կամ տանրարանութիւն, էջ 62:

⁵⁶ Նույն տեղում, էջ 58:

⁵⁷ Լ. Չաքրիկ Վ. Մէնեվիշեան, Պատկերազարդ բնական պատմութիւն, Բ. Գ., Հանքաբանութիւն, Կ. Պոլիս, 1897, էջ 64, 69:

⁵⁸ Նոր Բաղգիրք Հայկազեան լեզուի, Բ. 1, էջ 375:

⁵⁹ Լ. Աճառյան, ՀԱԲ, Բ. 1, էջ 335:

շատ հետաքրքրական է: Նյութի հատկությունը, մեր կարծիքով, այս դեպքում անվան է վերածվել որոշակի միջնորդություն: Այսպես՝ արջասպը կանաչ, մետաղական փայլով, թափանցիկ նյութ է, հանդիպում է պղնձի և երկաթի հանքերում, արհեստական ճանապարհով ստացվում է պղինձը ծծմբի հետ այրելիս: Այսինքն՝ արջասպը, որպես նյութ, սև գույնի հետ ուղղակի անընթաց շունի: Բայց այն օգտագործվել է սև ներկ ստանալու համար և մտնում է թանաքի (մելանի) բաղադրության մեջ: («Որպես ի դեղին գրիտորէ, և ի կանաչ յառջասպնէ լինի սեաւ»)՝⁶⁰ Քանի որ «արջն» բառը բարդությունների մեջ օգտագործվում է սև կամ թուխ իմաստով, որպես արջի հասարակ գույն, ուստի դա կարող էր պատճառ դառնալ, որպեսզի սև ներկ պատրաստելու համար օգտագործված կանաչ գույնի նյութը կոչվեր «արջն» բառով՝ արջասպ:

Մյուս կողմից «արջասպի» լատիներեն atramentum համարժեքը հայերեն թարգմանվել է նաև սևադեղ, սևակ տարբերակներով: Այդպես կոչվում են նաև սև ներկը, մելանը, թանաքը: Ուստի, եթե մենք սևադեղը համարենք արջասպի հետ, որպես նրա հոմանիշ, ապա կարող ենք ենթադրել, որ «ասպ» և «դեղ» բառերը նույնիմաստ են: Ավելին՝ արջասպի հոմանիշ է նաև սևալեղը⁶¹, ուստի արջասպ-սևադեղ-սևալեղ համադրումով «դեղի» իմաստ կարող ենք փնտրել նաև «լեղ» բառի մեջ: Նման ենթադրությունը կողմնակիորեն հիմնավորվում է այն փաստով, որ «լեղը» ծարիրի անվանումներից մեկն է, որն անցյալում օգտագործվում էր որպես աչքերը ներկելու դեղ⁶²: Մյուս կողմից չի բացառվում նաև, որ «ասպ» բառը, ինչպես և հայերեն -աթ վերջադիր մասնիկը (արծ-աթ, երկ-աթ), ունենա գույնը մատնանշող վերջածանցի իմաստ՝ -ավուն, տվյալ դեպքում՝ արջնավուն:

Արված բոլոր ենթադրությունների համար, ինչպես տեսնում ենք, հիմք կարող է ծառայել հակառակ՝ նյութի էության և անվան համապատասխանության տրամաբանությունը:

Վանանդեցիները նույնպես սևալեղը սևակի հետ օգտագործում են որպես արջասպի հոմանիշներ, իսկ նյութը վերագրում են պաղլեղների դասին:

Պ ա Ղ Ի Ե Ղ Ը, հուն. στυπτηρεια, լատ. Alumen, սպիտակ, տտիպ համով, քարաղի տեսքով, թափանցիկ, ապակու փայլով նյութ է: Մեզանում այն կոչվել է նաև շիբ, շաշ, որը փոխառված է արաբերենից: Բառն ըստ Աճառյանի⁶³ բարդված է պաղ «սառոյց, ցուրտ, հով» և լեղ բաղադրիչներից: Պլինիոս Վեյլազը պաղլեղների (սև և սպիտակ) հատկությունները նկարագրելիս հիշում է, որ շոշափելիս պաղլեղն առաջացնում է տաքի զգացողություն, իսկ գտնելվելու վայրերի թվում հիշատակում է նաև Հայաստանը⁶⁴: Պաղլեղի զանազան գործածությունների մասին Վանանդեցիները գրում են. «Շաբը ջերմարար, մաքրիչ, սեղմիչ և շորացուցիչ է: Բազմօգուտ աղ է, ծառայում է պատկերահանից, ներկարարաց, դարբնաց, ոսկերչաց, խաղախորդաց, այն է կաշեգործաց, գրագրաց, տպագրաց և գրքակազմից, որով գունատորի, ամրանայ և սերտանայ վերոգեալ արհեստատրաց ենթակայն»⁶⁵: Ուշագրություն դարձնենք պաղլեղի նույն՝ ջերմարար հատկության վրա: Հետևաբար, նյութը պաղ դեղ կամ պաղ լեղ (պաղլեղ) անվանելու պատճառը պետք է փնտրել նրա ուրիշ հատկությունների մեջ: Մենք կարող ենք ընդամենը ենթադրել, որ նյու-

⁶⁰ Նոր Բաղդիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 375:

⁶¹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 385:

⁶² Նոր Բաղդիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 883:

⁶³ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 13:

⁶⁴ Silius Italicus Plinius Secundus *Естественная история*, стр. 23—25.

⁶⁵ Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, Եզվ. աշխ., էջ 64—65:

թը «պաղ» կոչելու համար կարող էին հիմք ծառայել նրա երկու հատկութիւնն. նախ՝ սառույցին նրա նմանութիւնը (ապակու փայլը, քարաղի տեսքը), ապա այն հանդամանքը, որ պաղլեղն ունի արյունահոսութիւնը դադարեցնելու հատկութիւն, այսինքն՝ օրգանիզմի վրա ազդում է այնպես, ինչպես սառը (պաղ, պաղեցնող) միջոցները: Ուրեմն, չի բացառվում, որ արյունահոսութիւնը դադարեցնելու (մակարդելու) համար գործածված այդ դեղը, նրա հենց այդ հատկութիւնի շնորհիվ, կոչվեր պաղեցնող կամ պաղ դեղ՝ պաղլեղ: Իսկ «դեղ», «լեղ» նույնիմաստութիւն մասին խոսեցինք վերևում:

Ավելացնենք, որ պաղլեղը լայնորեն կիրառվել է նաև որդան կարմիրի դուլը կայունացնելու համար: Իսկ «պաղլեղ» բառի հիման վրա հետագայում առաջացել են նաև պաղլեղաջար (նյութ, որից ստացվում է պաղլեղը), պաղլեղիկ (ալյումինի օքսիդը՝ Al_2O_3), պաղլեղաթին (ալյումին) և այլ անվանումներ, որոնք, ինչպես և պաղլեղը, գործածվել են հիմնականում XIX դ. հայ բնաւույթների գործերում:

Հայ ալքիմիական ձեռագրերում նույնպես հարուստ տեղեկութիւններ կան այստեղ դիտարկված նյութերի մեծ մասի վերաբերյալ, որոնց յուրատեսակ մի ամփոփագիր է Կ. Ղաֆաղարյանի ուսումնասիրութիւնը⁶⁶:

Այսպիսով, մենք դիտարկեցինք մարդկութիւնը վաղ անցյալից հայտնի նյութերից մի քանիսի (քար, հող, կավ, աղ, ծծումբ, ածուխ, բորակ, արջասպ, պաղլեղ) անվանումների առաջացման հանգամանքները և փորձեցինք կապ գտնել դրանց ու համապատասխան նյութերի բնորոշ հատկութիւնների միջև: Վերլուծութիւնը ցույց է տալիս, որ, իրոք, գոյութիւն ունի նյութերի անվանումների ու նրանց բնորոշ հատկութիւնների փոխադարձ կապ, որը բնորոշ է մարդու՝ աշխարհի ճանաչման նախնական պրոցեսին: Մասնավորապես, քար նշանակում է ամուր, կարծր, հող՝ մերկ, բաց, ծծումբ՝ ծխացող, փշող, ածուխ՝ անծուխ: Որոշ անվանումներ առաջացել են նյութերի կիրառական հատկութիւնների հիման վրա, որոշներ՝ փոխառվել են հարևան ժողովուրդների լեզուներից, որոնց նախնական իմաստը հայտնի չէ:

О. М. АЙВАЗЯН — К вопросу о возникновении армянских названий неметаллов. — В статье рассматриваются обстоятельства возникновения армянских названий некоторых издавна известных человечеству веществ-неметаллов, таких, как камень, почва, глина, соль, сера, уголь, селитра, купорос, квасцы, и делается попытка найти взаимосвязь между названиями данных веществ и их характерными свойствами. Наблюдаемая опеределённая связь является отражением процесса постепенного названия человеком среды своего обитания, характерных внешних свойств веществ, их пригодности в применении, и составлении на их основе названий веществ. В частности, «камень» на армянском языке имеет смысл крепости, твёрдости, «почва» — полости, открытости, «сера» — горючести, дыма, «уголь» — горючести без дыма и т. д.

Названия некоторых веществ заимствованы из соседних языков, однако их первоначальные значения нам пока неизвестны.

⁶⁶ Կ. Ղաֆաղարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940: